



20. ՊԱՐՏԱՊԵՅ

Ըլել ա, շի ըլել՝ մի թքավոր. էդ թքավորը ունեցել ա մի ախշիկ: Ախշկանը շրջարեւիս են ըլել ուրիշ տերութիւննի՝ ուզելիս, դա տվել շի:

Ուրիշ մի Դև էկավ դրա քաղաքի դեմը մի քաղաք շինեց: Դրանից եղնը Ուշապը դես շարշարվեց, դեն շարշարվեց, էդ ախշկանը վախցրուց տարավ:

Թքավորն ասավ.— Ուրիշ հնար չկա, Պարտապեյին բերեք, բալքի հնարք անի՝ էդ ախշկանը բերի:

Գնացին Պարտապեյին կանչեցին: Պարտապեյը վեց տղա վեկալավ գնաց: Գնաց Պարտապեյը երգրնի ման էկավ, ման էկավ շատ տեղեր, գնաց գտավ Դևին:

Դևին գտավ, Դևն ասավ.— Պարտապեյ՛, դու ի՞նչ ես շինում ըստեղ, գնանք գինի խմենք:

Պարտապեյն ասավ Ուշապին.— Չէ՛, արի գնանք՝ ես քի գինի խմացնեմ:

Գնացին, Պարտապեյը մի դյուժին, էրկու դյուժին գինի առավ, իրուր հետ խմեցին:

Ասավ.— Պարտապեյ՛, ուղտին գդալով շուր տալ շի լիլ, գնանք ես մի քիչ գինի ունեմ, խմենք:

Պարտապեյին տարավ իրան տան վերին ատեժը, բերեց մի

ռումբի գինի դրուց իրան կուշտը, իրան աղաքին դրուց մի վեդրո, նրա աղաքին՝ մի շայի ստաքան: Մի առժամանակ դրանք խմեցին էդ գինին: Պարտապելը տեհավ, որ Ուշապը հարբում չի, ինքը հարբում ա. մի տաշտ կար, Ուշապը որ վեդրոն քաշեց գլուխը, սա քաշեց տաշտը աղաքը: Ուշապը, որ վեդրոն քաշում էր գլուխը, սա ստաքանի գինին ածում էր տաշտը: Մի վախտից հետո տեհավ, որ Ուշապը հարբեց, մին էլ որ Ուշապը վեդրոն գլուխը քաշեց, Պարտապելը վե կալավ Ուշապի գուրգեն ու Ուշապի գլխին տվուց: Տվուց՝ շըշկլացրուց, մեկ անգամ էլ տվուց, թքավորի ախշիկն էլ էկավ քոմակ արավ, էրկուսով դրան վե դրին, սըպանեցին:

Թքավորի ախշիկն ասավ.— Ցերեկը կարելի չի գնալը, Դևր շատ մարդիկ ունի, կիմանան, կգան մեզ կտոր-կտոր կանեն. պետք ա քշերը գնանք:

Քշերը դրանք Ուշապի ձիանոցեն էրկու լավը դուս բերին, վեր էլան, ճամփա ընկան, գնացին ծովի դրադը: Մովի դրադին Պարտապելը իրան հընկերը թողել էր, վեց հընկերը իրենց միշին խորուդ արին, թե Պարտապելին վարենանք մի կերպ փչացնենք, ախշկանը մենք տանենք, որ թքավորից անկըշկալեքը մենք ստանանք:

Պարտապելը էդ ախշկանիցը մի մտանիք նշան առավ: Մտան պրախտտը, էդ վեց ընկերը շգիտեին, թե դա ախշկանիցը նշան ա առել: Պըտըտեցին էդ Պարտապելին քցեցին ծովը: Դրադից մոտիկ էր, Պարտապելը լեղ գիտեր, լեղ տվուց դուս էկավ: Որ դուս էկավ, իրան շընանշող մարդ շատ կար, հայտնի մարդ էր: Պարտապելը գնաց մեկ տեղ ծովի դրադին միտք անելով քնեց:

Քնեց որ է, էկավ իրան ճնանշող մարդ, ասավ.— Պարտապել, քեզ ի՞նչ ա պըտահել, գնանք տուն, — ասավ, — սոված կլիս, հաց կե, ախր ես քի ըտենց չեմ տեհե, էս ի՞նչ ա պըտահել: Բա ի՞նչ ես ուզում ինձանե դու, ի՞նչ տամ, որ լավ ըլի քեզ, ասա տենունք: — Առ, — ասավ, — իմ ձեռիցը էկածը էս ա, մի ձի տամ քեզ, մեկ էլ մի քիսա: Քիսեն, — ասավ, — էնդու հմա եմ տալի քեզ, ինչքան ձեռդ մեջը տանես՝ փող հանես, հատնի ոչ, ձին էլ, — ասավ, — որ տալիս եմ, մի թուր էլ հետը, էս ձին ու թուրը քանի որ քու կշտին ըլի, ինչքան դոշուն գա՝ քեզ կարալ շին բան անել:

Պարտապելը ձիուն նստեց, թուրը կապեց վրեն, քիսեն դրուց շերը, շնորհակալութիւն արավ, գնաց: Հըմի ցամաքովն ա գնում: Ցամաքովը գնաց շատ էրկարեց: Գնաց, մի վախտեն եղնը հասավ թքավորի քաղաքը, տեհավ, որ թքավորի ախշիկը դեռ էկել չի: Թքավորի ամարաթի կշտին դա իրան հմա տներ շինեց՝ թքավորի

ամարաթի պես: Տները որ շինեց հա՛, թքավորին բերեց, լավ պատ-
վեց: Մի քանի օրից եղբ իմացավ, որ ախշիկը գալիս ա: Ախշիկը
էկավ: Թքավորը կանչեց էդ վեց տղերանցը ասավ.— Պարտապե-
լը ո՞ւր ա:

Ասին.— Մենք տեհել չենք, մեզանն շըշկըլեց, ուրիշ տեղ գնաց:
— Բա էդ ախշիկը դուք որդիա՞ն բերիք:

Ասին.— Գնացինք Ուշապին գտանք, սըպանեցինք:

Թքավորը հըսկանում ա, որ դրանք չեն սըպանել:

Բերուց իրիկունը ղոնախըղ արավ, իրան մտտիկ մարդկե-
րանց կանչեց: Որ գինի ածեցին՝ խմեին, ախշիկը տեհավ, որ իրա
մատնիքը Պարտապեյի մատին ա, հըսկացավ, որ Ուշապին սըպա-
նողը դա ա:

Ախշիկը խաբար արավ, էն վեց տղին կանչեց, ասավ.— Դուք
ինձանից ի՞նչ գիտեք, որ ասում եք, թե՛ մենք ենք բերել: Ա՛յ,—
ասավ.— Պարտապեյին իմ մտանին նշան եմ տվել, Ուշապին
սպանողն ու ինձ բերողը Պարտապեյն ա:

Թքավորն ասավ.— Պարտապե՛յ, իմ ախշիկս տվի քեզ:

էն վեց տղին էլ սըպանել տվուց:

էդ ախշկանը բերին Պարտապեյի հետ հըրսանիք արին:

Հըրսանիք արին էդ ախշկանը. ուրիշ մի թքավորի տղա իմա-
ցավ, որ էդ ախշիկը հըրսանիք ա ըլել Պարտապեյի հետ, ասավ.—
Պետք ա ես Պարտապեյին սըպանեմ, էդ ախշիկը ես ուզեմ:

Պարտապեյին դա տարավ ղոնախ ու լավ ղոնախ արավ: էն
մեկել օրն էլ Պարտապեյը դրան ղոնախ արավ: Պարտապեյին,
որ ղոնախ արավ, թքավորի ախշիկը էդ տղին խոսքը տվուց, թե.
«Ես քեզ կուզեմ»:

Տղեն հմի ուզում ա գնա ղոշուն բերե, զոռով էդ ախշկան տա-
նի, Գնաց: Շատ ղոշուն բերուց, էկավ դուռը կըտրեց: Պարտապեյը
դուռ էկավ, տեհավ, որ ղոշունը էկել դուռը կըտրել ա. ձին դուռ
բերուց, թուրը կապեց, ձիուն վեր էլավ, ղոշունի մեջը մտավ, ղո-
շունը չիմ ջարդեց, հնենց ջարդեց, խաբար տանող շմնաց:

Թքավորի տղեն տեհավ, որ էդքան ղոշունը ջարդեց, էլի ղո-
շուն բերուց, էտպես իրեք: Տեհավ, որ էլի Պարտապեյը ձին նստեց,
թուրը կապեց, ղոշունը չիմ ջարդեց: Ախշկա վրա էդ տղեն մի գիր
գրեց, թե.— Մի՛ իմացի, թե գրա ուժը ընշո՞ւմն ա:

Ախշիկը գիր գրեց, թե. «Եմացա, ուժը թրումն ա, ղոշունը ավել-
ցրու, արի՛՛»:

էդ քշերը էդ ախշիկը բերուց էնթավուր մի թուր կախ արավ
ընդեղ, էն թուրը վիկալավ, պըհեց:

Թքավորի տղեն էքսը ղոշունը բերուց, ուսլոտը էկավ դուռը
կտրեց: Պարտապելը ձին վեր էլավ, թուրը կապեց, ընկավ ղոշունի
մեջը ըստեղ ա տալի, ընդեղ ա տալի, տենում ա կտրում չի: Զոռա-
զի են էդ ախշիկը վեր ունում տանում: Տանելուց եդը մի քանի օր
մնում ա, Պարտապելը ձին դուս ա բերում, նստում, ղու ըլնում:

Գնում ա, որդեղ որ թուրն ու ձին իրեն տվել են՝ ընդեղ:

Ասում ա.— Պարտապե՛լ, էդ ի՞նչ ա պըտահել, որ քեզ ըտենց
եմ տենում: Բա հըմիկ ի՞նչ ես ուզում, որ քեզ տված ըլեմ:

Պարտապելը գլուխը վեր չի ունում:

էն մարդն ասում ա.— Հըմիկ կտամ քեզ մի մատանիք, մա-
տանին տար, ինչ որ էդ մատանիքիցը ուզես՝ կըլի:

Պարտապելը մատանիքը վի կալավ, էկավ ձին դուս բերուց,
նստեց, ընկավ ճամփա: էկավ քշեր ու ցերեկ անելեն, հասավ իրան
տուն: Տանիցը միօր վե կացավ, գնաց իրան կնիկը փախցնող Թքա-
վորի ամարաթի առաջը, դառավ մի մենձ յինարի ծառ: էդ ախշիկը
դուս էկավ, ասավ,— Թքավորի տղա՛, էդ Պարտապելն ա, բեր,—
ասավ,— կըտրե՛:

Ասավ.— Ա՛յ կնիկ, մենք հաղարնի պտինք ծախս ընել, որ էդ
թավուր մի ծառ բնանցընենք, Պարտապելը ծառ չի դառնալ, դա
ծառ ա:

Ասավ.— Ես քեզ ասում եմ՝ կտրե՛, կփոշմանես:

Բերուց դա, որ կտրե հա՛, կտրելիս տեղը, մի պուճուր ախշիկ
ունեին ղրավաշ, ասավ.— Վա՛յ, ա՛ ծառ ջան, քեզ կտրիլ պտին:

Մառն ասավ.— Ախշիկ ջա՛ն, որ կտրեն, մի խուշուր կթուշի,
կընկնի քու գոզը, որ ընկնի քու գոզը,— ասավ,— կտանես կզցես
ձեր ջրի հավուզը:

էկան կտրեցին, խուշուրը թուավ ընկավ էն ախշկա գոզը. էն
ախշիկը տարավ զցեց իրանց հավուզը:

Թքավորի տղեն ասավ.— Ափսո՛ս, էսթավուր ծառը կտրիլ
տվիր, Պարտապելը ծառ կդառնա՛:

Շատ իրուր հետ ընկան էդ ծառի պատճառովը: Եղնա միօր
տեհան, որ էրկու սիրուն աղունիկ էկան, իրանց ամարաթի մեջ ման
ին դալի:

Ախշիկն ասավ.— Թքավորի տղա՛, դա Պարտապելն ա, բունե՛,
կփոշմանես:

Ասավ.— Թքավորի ախշի՛կ, էն թավուր ծառը կտրիլ տվիր,
հըմիկ էլ ուզում ես էդ սիրուն աղունիկները սըպանի՞լ տաս:

էլի ըսենց մի էրկու օր դրանց խոսքը իրար դիպավ: Քշերը որ քնեցին, էդ աղունիկնին դառան Պարտապեյ, իրան թուրը վի կալավ, դուս էկավ, ձին նի էլավ, գնաց: Գնաց իրսն տուն: Գնաց ախշկա հորը կուշտը, ասավ.— Թքավորն ապրած կենա, մի տես քու ախշիկը ինչ բերուց իմ գլուխը. արի գնանք դու մտիկ արա, թե նրան ինչ կանեմ:

Թքավորին վիկալավ, դուս էկան, ճամփա ընկան: Գնացին տեհան, որ էդ տղեն ու էդ ախշիկը դեռ հլա քնած են, առանցի հարցմունք, առանցի գանգատ Պարտապեյն էրկուսին էլ հենց քնած տեղը կըտորեց:

Թքավորը դրա ճակատը պաշեց:

Վերուց էն պուճուր ղարավաշը, որ դրանց տանը կար, չէ՞ նա ասավ, թե. «Ա՛ ծառ ջան, քեզ կտրիլ պտին», ընդուր մասին,— ասավ,— իմ զամաթս էս ղարավաշն ա,— բերուց էդ ղարավաշին թքավորի պայմանովը ուզեց: Բերուց օխտն օր, օխտն քշեր հըրսանիք էլավ: Բերուց իրան տուն: Նրանք հասան իրանց մուրազին, մենք էլ հասնենք մեր մուրազին:

Չարըն ընդի, բարին ըստի:

Աստծանե իրեք խնձոր վեր ընկավ. մինն՝ ասողին, մինը՝ չսողին, մինն էլ՝ ալամ աշխարքին:

